ՀԱՂՈՐԴԱԳԻՐ

Հայաստանում ԵՄ Թվինինգ ծրագիր վիճակագրության ոլորտում (II փուլ)

N°2

Եռամսյակային հաղորդագիր՝ հրապարակված ԵՄ կողմից ֆինանսավորվող «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – 2-րդ փուլ» Թվինինգ ծրագրի ԹՄԽ գրասենյակի կողմից

Սա ԵՄ *«Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – 2-րդ փուլ»* Թվինինգ ծրագրի երկրորդ հաղորդագիրն է:

Ծրագրի 2-րդ եռամսյակի ընթացքում իրականացվել են հետևյալ գործողությունները.

Աղքատության վիճակագրություն
Պիլոտային հետազոտության արդյունքների հիման վրա, որն իրականացվել է ծրագրի առաջին եռամսյակի ընթացքում, համաձայն փորձագետների եզրակացության՝ կենսապայմանների ամբողջացված տարեկան հետազոտության (ԿԱՀ) մեջ սոցիալական բացառումների վերաբերյալ տվյալների հավաքագրման առաջարկված մոտեցումը շատ խոստումնալից է:
Նոր մոդուլն ավելացվել է գործող հետազոտությանը և 2016թ. ընթացքում իրականացվող տվյալների հավաքագրման արդյունքները կերևան 2017թ. վերջում:

Աշխատանքային իրավիճակներ ծրագրի 2-րդ եռամսյակի ընթացքում

Ժողովրդագրական վիճակագրություն
Գնահատվել են կենսական վիճակագրության և միգրացիայի վիճակագրության վերաբերյալ ընթացիկ մեթոդաբանությունը և տվյալների որակը: ԵՄ փորձագետներն ընդգծել են այն ոլորտները, որոնց վրա պետք է ուշադրությունը կենտրոնացնեն հետագա առաքելություններին և ընդհանուր պատկերացում են կազմել գործող վարչական տվյալների աղբյուրների վերաբերյալ: Ժողովրդագրական վիճակագրության հետ կապված տվյալների ավելի լավ որակի և ընդգրկվածության զարգացման առանցքային ոլորտը սերտորեն կապված է վարչական տվյալների հասանելիության հետ:

Վիճակագրության տարածում
Ուշադրության կենտրոնում էին երեք ոլորտներ. սպառողների հետ համագործակցություն, վիճակագրական նպատակներով վարչական տվյալներ տրամադրողների հետ համագործակցություն, և ազգային վիճակագրական համակարգի համակարգում: Իրականացվեց շատ արդյունավետ հանդիպում, և ՀՀ ԱՎԾ-ն ներկայում նախարարությունների հետ տվյալների փոխանակման համաձայնագրերի նմուշի մշակման փուլում է:

Աշխատաշուկայի վիճակագրություն
Իրականացվել է առաջին առաքելությունը, որի ընթացքում գնահատվել է աշխատաշուկայի վիճակագրության ընթացիկ իրավիճակը: Հետագա առաքելությունների համար ոլորտում ազգային շահառուների հետ լավ հարաբերությունները շատ խուստումնալից են երևում:

Ջրի հաշիվներ
Հաջողությամբ իրականացվել է գնահատման առաքելություն և ըստ ԵՄ փորձագետների Հայաստանում ջրի հաշիվների հետագա իրականացման համար առկա են ամուր հիմքեր: Կենտրոնական շահառուները ողջունել են պլանավորված աշխատանքը և ցուցաբերել ծրագրում ներգրավվելու մեծ հետաքրքրություն:

Ծրագրի առաջընթացի հետ մեկտեղ համապատասխան փաստաթղթերը և նյութերը բեռնվում են ծրագրի կայք-էջում անգլերեն և հայերեն լեզուներով: Ծրագիրը նաև ունի ֆեյսբուքյան էջ, որը կանոնավոր կերպով թարմացվում է: Հղումները տրված են ստորև:

Ծրագրի երրորդ եռամսյակին նախատեսվում է 4 ծրագրային առաքելություն Հայաստանում և ուսուցողական այց Իտալիա ԿԱՀ/աղքատության թեմայով:

Լրացուցիչ տեղեկությունների համար՝
Պիտեր Բոնստեդ Անան Հանսեն (ԹՄԽ)
pah@dst.dk

Հեռ.՝ + 374(0)99077916
Կայք-էջ՝ www.dst.dk/armenia2015
Ֆեյսբուքյան էջ՝ www.facebook.com/EU-Armenia-Twinning-Project-on-Statistics-II-801732856606449

Թվինինգ ծրագրի հիմնական թեմաները

1. Վիճակագրության տարածում
Վիճակագրական տեղեկատվության տարածման բարելավված համակարգ, մշակված տեղեկատվության տարածման համակարգի ռազմավարություն, սպառողների բավարարվածության հետազոտության արդիականացված, փորձարկված և հրապարակված հարցաթերթ

2. Ժողովրդագրական վիճակագրություն
Բարելավված կենսական և միգրացիոն վիճակագրություն, տվյալների հավաքագրման բարելավված մեխանիզմների ռազմավարություն (թղթային աղբյուրներից անցում վարչական ռեգիստրների)

3. Աշխատաշուկայի վիճակագրություն
Հաշվարկված և հրապարակված աշխատանքի գին, աշխատանքի գնի ինդեքս, ինչպես նաև վաստակի վերաբերյալ հաշվարկված և հրապարակված կառուցվածքային վիճակագրություն

4. Աղքատության վիճակագրություն
Սոցիալական բացառումների վիճակագրության ներդրում և հաշվարկում (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համագործակցությամբ)

5. Նորարարական վիճակագրություն
Ներդրված նորարարական վիճակագրություն, նորարարական վիճակագրության մշակված մեթոդաբանություն, կանոնավոր արտադրման և հրապարակման պլան

6. Ջրի հաշիվներ
Առանցքային շահառուների հետ ջրի հաշիվների մշակված մեթոդաբանություն, ջրի կազմված հաշիվներ

STATISTICS DENMARK

Այս ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում է Դանիայի վիճակագրության կողմից՝ Ֆինլանդիայի, Իտալիայի, Լիտվայի վիճակագրությունների հետ համատեղ:

Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Սույն հրապարակման մեջ տեղ գտած տեսակետները հանդիսանում են Դանիայի վիճակագրության պատասխանատվությունը և կարող են չարտացոլել Եվրոպական միության տեսակետը: